

ԱՐԽԱԶԻՍՅԻ Ա. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄ

375

4-19

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՍԱԿԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ,  
ՊԱՐԱՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
(ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ)

2-րդ ԲԱՐԵՓՈՒԽՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



3 MAR 2014

Единая программа для занятий со взрослыми в школе грамоты (для города и села) на арм. языке.

Перевод С. Хачадурян.



Տեխն. խմբագիրը՝ Պեղչիկ.

Հանձնված է մամուլին 8/IV—34 թ. ստորագրված է տպագրության համար 12/V—34 թ. ծավալը  $1\frac{3}{4}$ —34 թերթ. չափը  $60 \times 75$ , թերթի տատողությունը 39. 680 նշան. Գլավլիտ 32—ա.

Արպեստրատի տպարան. Տիրած 400 օրինակ. Պատվեր № 2241

Մ Ի Ա Ս Ն Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՍԱԿԱՎՈՐՆԵՐԻ ՇԵՏ ՊԱՐԱՊԵ-  
ԼՈՒ ՀԱՄԱՐ (ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ)

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ո Ւ Ն

Ներկա ծրագիրը ծառայում յե վորպես ձեռնարկ կուլտուրանախայինների համար՝ հասակավորների դպրոցում, ինչպես Աբխազիայի քաղաքներում, այնպես ել գյուղերում:

Ծրագրում տրված է բացատրական նամակ մեթոդական ցուցմունքներով, վորոնք կուլտրանախայինին կոգնեն պարզաբանելու գրագիտության դպրոցի հիմնական խնդիրները և դասավանդման ձևերը:

Ծրագրային նյութի գիտելիքների և ունակությունների պարունակությունը կուլտրանախայինների կողմից պիտի հիմնավորապես մշակության յենթարկվի:

Ծրագրային նյութի պարունակությունը պարտադիր է գրագիտության դպրոցի աշակերտների համար:

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՍԱԿԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

### ՊԱՐԱՊԵԼՈՒ ՀԱՍԱՐ

I

#### ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Գրագիտութեան դպրոցի խնդիրն է.—աշակերտներին հնարավորութիւն տալ տիրապետելու ուսման, գրավորի և հաշվի տեխնիկական ունակութիւններին. սովորեցնել նրանց կյանքի և արտագրական աշխատանքի մեջ ոգտագործելու այդ ունակութիւնները:

2. Գրագիտութեան ուսուցման ամբողջ ընթացքը դարձնել հասարակական-քաղաքական դաստիարակութեան մի կարող գործիք՝ մարքսիզմի —լենինիզմի, քաղաքական լուսավորութեան, դասակարգային պայքարի համար մասսայի կազմակերպման և սոցիալարարութեան հիմունքների վրա:

3. Ծավալել աշակերտների առաջ մեր սոցիալարարութեան հաջողութիւնները և զինել նրանց պոլիտեխնիկական գիտութիւնների և ունակութիւնների լիակատար պաշարով, վորոնք նրանց հնարավորութիւն կտան տիրապետելու արտագրութեանը, տիրապետելու տեխնիկային և դրանով կարագացնեն տեմպերը ու ձեռք կբերեն ել ավելի հաջողութիւններ սոցիալարարութեան գործում:

«Քիչ բան է մտում մեզ.—ուսուցնասիրել տեխնիկական և տիրապետել գիտութեանը: Յե՛վ յերբ մենք այդ կանենք, այնպիսի տեմպեր կունենանք, վորոնց մասին մենք այժմ չենք համարձակվում անգամ յերազել: Յե՛վ մենք այդ կանենք, յեթե իրապես ցանկանանք այդ» (ընկ. Ստալինի ճառից):

4. Աշակերտների մեջ զարթեցնել հետաքրքրութիւն հետագայում իրենց ձեռք բերած գիտական պաշարը ընդլայնելու և խորացնելու՝ մտնելով կիսագրագետների գպրոցը, ոգտագործելով լրագիրներ ու գրքեր, գրադարաններ, ընթերցարաններ և աստիճանաբար ինքնակրթութեամբ պարսպելով:

II

#### ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ ԾՐԱԳՐԻ ԱՌԹԻՎ

##### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՆԷՆԵՐ

Լիկկայանի ամբողջ աշխատանքը կառուցվում է վոյ միայն գրագիտութիւն սովորեցնելու վրա, նա պիտի ոժանդակի նաև աշակերտութեանը կոմունիստական վոգով դաստիարակելու գործում:

Վորպեսզի այդ խնդիրը կարելի լինի իրագործել, հարկավոր է, վոր ծրագրային նյութը իր մեջ ամփոփի կուսակցութեան և խորհրդային կառավարութեան հիմնական խնդիրները սոցիալիստական շինարարութեան տապարիզում: Ձեռք բերած հաջողութիւնների հիմունքների վրա դրել աշակերտութեանը դեպի ստեղծագործութիւն, դեպի ակտիվ մասնակցութիւն սոցիալիզմը իրականացնելու պայքարի մեջ:

Վորպեսզի աշակերտները մեջ հետաքրքրութիւն առաջանա դեպի հետագայում ինքնակրթութեամբ պարսպելու աշխատանքը, անհրաժեշտ է առաջնորդել պարսպմունքների ընթացքում ընթացիկ հասարակական—քաղաքական յերևույթներով:

Հարկավոր է կիսա գիտատեղի կիսագրագետների դպրոցի հետ, վորը անդրագետների համար ծառայելու յե վորպես գրգիչ ֆակտոր, իրենց գիտութիւնը ավելի ընդլայնելու և անցնելու կիսագրագետների դպրոցը:

Ուսուցման նյութը պիտի համապատասխանի հասակավորի շահերին ու իր հերթին ընդլայնի նրա շահերն ու ձգտումները, վորպես ուղղիչ՝ սոցիալիզմի իրականացնելու գործում:

Աշխատանքի պլանի ճիշտ կառուցելու նպատակով, ուսուցիչը իր ժամանակին պիտի պարզի աշակերտութեան գիտական պաշարն ու նրա շահերը: Յերբ այդ հանգամանքը հաշվե կառնվի, —ընթերցանութեան, գրավորի և հաշվի ուսուցումն ել կարող է ընթանալ համապատասխան հետևողականութեամբ:

Հարկավոր է առանձնապես ուշք դարձնել, վոր առանձին ունակութիւնները լավ պատմաստվեն աշակերտների մեջ. դրա համար հարկավոր է:

ա) Այդ ունակութեան մեխանիզմի մշակումն:

բ) Յերկարատե վարժութիւն և խիստ հետևողականութիւն նյութի դասավորման մեջ (հեշտից դեպի դժվարը):

գ) Հասակավոր աշակերտների անհատական առանձնահատկութիւնների հաշվառումն:

դ) Ունակութիւնների կառուցումն՝ կոնկրետ, կենդանի և աշակերտների համար հետաքրքիր նյութերի վրա:

Վորպես ուսուցման նյութ, լայնորեն պիտի ոգտագործվի մասսայական լրագիրը, վորը հանդիսանում է ամենալավ միջոցը ընթացիկ դեպքերի բացատրութեան գործում և կենդանացնում է դպրոցի աշխատանքը: Դպրոցն ավարտելուց հետո աշակերտութեան մեջ մտում է լրագիր կարդալու հետաքրքրութիւնը, վոր զբոգում է նրան հետագայում ընթերցանութեամբ զբաղվելու և ինքնակրթութեամբ պարսպելու: Սկզբում լրագիրը կարդում է ինքը ուսուցիչը, ապա, նայած ձեռք բերած տեխնիկական ունակութիւններին, նաև աշակերտները:

Դպրոցական աշխատանքների մեջ անպլան մտցնել տեղական լրագիրը, դարձնելով նրան անհրաժեշտութիւն աշակերտ-

ների աշխատանքների մեջ, դրանով միաժամանակ դրոված կը լինենք նրան՝ ինքնուրույն կերպով բաժանորդագրվելու լրագրներին:

Աշակերտներին պիտի սովորեցնել գրագրարանի գրքերից և լրագրերից ոգտվելու ձևը, վորը հետագայում կդառնա ամենալավ միջոցը ամրապնդելու նրանց մեջ ձեռք բերված ունակութիւնները և ընդարձակելու նրանց գիտական պաշարը:

Ուսուցման նյութը հաջող կերպով յուրացնելու համար, ուսուցիչը իր ամեն մի դասը պիտի կառուցի աշակերտութեան լայն ինքնագործունեութեան հիմունքների վրա և կարեցածին չափ դիտողական ու գյուրըմբռնելի դարձնի:

Հասարակական—քաղաքական հարցերի վերաբերյալ ծրագիրը պիտի ծառայի վորպես հիմնական ողակ ամրող աշխատանքի պլանի կառուցման գործում:

Տեխնիկական դասի (техчас) նյութի մշակման համար հրավիրվելու յե մասնագետ անձն նորակառուցներից կամ հիմնարկներից, վորոնց մեջ աշխատում և աշակերտութեան մեծ մասը:

Ագրոգոդասի ուսուցման նյութը պիտի կազմվի տեղական գյուղատնտեսի մասնակցութեամբ:

Սանիտարական դասի նյութն ու ուակութիւնները տըրվում են աշակերտներին ուսուցչի կողմից դասավանդման ամբողջ ընթացքում:

### 2. ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Նախքան անգրագետներին կարգալ սովորեցնելը, անպատճառ պիտի ծանոթացնել նրանց լեզվի հետ, այսինքն, վոր մեր լեզուն կազմված և նախագասութիւններից, ու վերջիններս իրենց հերթին կազմված են բառերից, բառերը՝ վանկերից և հընչյուններից (տառերից):

Ուսուցիչն ուսուցման հենց սկզբից, ապա և հետագա գասերին պիտի առաջնորդվի աշակերտների ունեցած ծանոթութեանը նից—լեզվի, նախագասութեան, բառի (վորպես նախագասութեան բաղադրիչ մասը) և տառի (վորպես բառի և վանկի մասը) հետ:

Գրագիտութեան դասավանդութեանը տարվում և ամբողջական բառերի մեթոդով: Վորպես ձեռնարկ այդ մեթոդով դասավանդելու համար կարող և ծառայել Աբխազիայի Ա. Ս. Հ. Լուսժողովի հրատարակած «Մեթոդական ձեռնարկ կուլտրանակայինի համար» գրքույկը (հրատ. 1932 թ.):

Նախագասութիւնները բառերի վերածելուն և նախագասութիւնների ընթերցմանը հատկացվում և 2—3 պարագմունքի որ:

Նախագասութիւնները բառերի վերածելուն, բառերը՝ վանկերի և վանկերից նոր բառեր ու բառերից նոր նախագասութիւններ կազմելուն հատկացվում և 1—3 պարագմունքի որ:

Յերբ աշակերտները կյուրացնեն նախագասութեան և բառի

լադադրիչ մասերի վերածումն՝ մոտավորապես 8—10 պարագմունքի որ անցնելուց հետո, կարելի յե անցնել՝ բառերը վանկերի վերածելուն, վանկերը՝ հնչյունների ու տառերի, վերջիններից ծանոթ վանկեր, բառեր ու նախագասութիւններ կազմելուն: Հընչյունների (տառերի) վերլուծութեան շրջանը տևում և մոտավորապես 20 պարագմունքի որ:

Գրագիտութեան ուսուցման անհրաժեշտ ու անսխալարիներ պիտույք են հանդիսանում կտրտված տառերը: Կտրտված տառերը աշակերտներին հնարավորութեան են տալիս շոշափելի կերպով տարբերելու առանձին ելեմենտները (տարբերը) բառերի մեջ, հեշտութեամբ հիշելու տառերը և ծանոթ տառերից՝ բառեր ու նախագասութիւններ կազմելու:

Հեշտ ու արագ կերպով կապակցական ու գիտական ընթերցմանն անցնելու համար ոգտակար և աշակերտների ձեռքը տալ լրագրեր, գրքեր ու ամսագրեր, առաջարկելով նրանց վերնագրերի մեջ գտնել արդեն իրենց ծանոթ վանկեր ու ամբողջական բառեր:

Ոգտակար և նաև ոգտագործել լոգունգներ ու պլակատներ: Ընթերցանութեան ուսուցման ամբողջ ընթացքում ուսուցիչը պիտի հետևի, վոր ընթերցումը լինի վոչ մեքենայական, այլ գիտակցական:

Ընթերցման շրջանում աշակերտները պիտի կարողանան կարգալ և գրքերից ու լրագրերից կարդացածը հասկանալ:

### 3. ԳՐԱՎՈՐԸ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ընթերցանութեան ուսուցման հետ միաժամանակ տարվում և և գրավորի ուսուցումը հետևյալ հետևողականութեամբ:

- ա) Գիտակցական արտագրութիւն.
- բ) Կես—ինքնուրույն գրավոր.
- գ) Ինքնուրույն գրավոր:

Գրավորի հենց առաջին դասից հարկավոր և աշակերտներին սովորեցնել ուղիղ նստելը, գրիչը կամ մատիտը ուղիղ բռնելը, ձեռագիր շրիֆտի համար նախապատրաստել ձեռքի շարժումները, վորի համար գրավորը սկսել տպագիր տառերի արտանկարումով և հետևել, վոր տառերը նկարվին այն ձևով, ինչ ձևով վոր մենք գրում ենք. որինակ՝ «մ» տառը սկսել վոչ թե վերևից ներքև, այլ ներքևից վերև և վրչի մի շարժումով վերջացնել տառի գծագրումը: Հենց վոր աշակերտները կյուրացնեն առանձին տպագիր տառերի գծագրման ճիշտ ձևը և վրչի շարժումների քանակը, հեշտ կլինի արդեն ձեռագիր տառերին անցնելը:

Ձեռագիր տառերով գրավորի ուսուցումը սկսվում և միաժամանակ հնչյունների հետ ծանոթանալիս, այսինքն 3—10 պարագմունքի որից հետո:

Սառն շրիֆտով գրավորը չի թույլատրվում: Շրիֆտը, ըստ հնարավորութեան, պիտի պարզ ու մատչելի դարձնել:

Արտագրութիւնը պիտի կատարել ամբողջական բառերով և

վոչ թե առանձին տառերով, վորովհետև առանձնացրած տառերի ձևակերպումը պահանջում է մի քիչ այլ շարժումներ, քան այդ լինում է բառերի մեջ:

Գրավորի ուսուցման ժամանակ, վորպես հիմնական կանոն պիտի ծառայի՝ նախագրուշացումն տառասխալներից դիտողական և լսողական անալիզի միջոցով, նաև զիտակցական արտագրությունը: Նախ դան գրավոր վարժություններ տալը ուսուցիչը պիտի լրիվ չափով մշակի նյութը աշակերտների հետ, վորպեսզի անհասկանալի չմնան վոչ մի նախադասություն, վոչ մի բառ:

Կես—ինքնուրույն գրավորը արտահայտվում է հիշողության միջոցով: Աշակերտները հիշողությամբ գրում են ծանոթ բառեր ու նախադասություններ: Այդ զեպքում գործադրվում են հետևյալ ձևերը.—

1) Աշակերտները արտագրում են դասագրքից: Յեթե հերթը հասնում է ծանոթ բառերի արտագրության, դասագիրքը փակվում է:

2) Աշակերտները արտագրում են գրատախտակից: Նախադասությունը մշակելուց հետո ծանոթ բառը ծածկվում է կամ ջրնջվում, թողնելով նրա տեղը բաց, վորպեսզի աշակերտները արտագրելիս չմոռանան, վոր այդտեղ պիտի գրվի ծանոթ բառը:

3) Ուսուցիչը հարց է տալիս, վորի պատասխանը պիտի լինի ծանոթ բառը: Այս բառը նախապես վերլուծման յենթարկելուց հետո, գրում են այն:

Ինքնուրույն գրավորին հատկացվում է ավելի ուշ ժամանակ: Ինքնուրույն գրավորին անցնելով, չպիտի դադարել աշակերտների հետ նախադասություններն ու բառերը լսողական և զիտողական անալիզի վերածելուց: Նախադասությունների և բառերի վերլուծության միջոցով ձեռք բերված ինքնուրույն գրավորների ունակությունների կուտակման ընթացքում, հարկավոր է հաջորդաբար ել ավելի ժամանակ հատկացնել լսողական անալիզին, կրճատելով զիտողականը, այսինքն աշակերտներին վարժեցնել ինքնուրույն կերպով լսողությամբ ջոկելու բառերի մեջ նրանց առանձին բաղադրիչ մասերը:

Ինքնուրույն գրավորի համար, իբրև աշխատանքի առանձին ձևեր, կարող են ծառայել կյանքի մեջ միշտ անհրաժեշտություն ներկայացնող զանազան գրություններ կազմելը.— գիմում, հավատարմագիր, անկետա լցնելը, հասցե գրելը, նամակ գրելը, թերթի համար թղթակցություն կազմելը և այլն և այլն:

# Ծ Ր Ա Գ Ի Ր

Թ Վ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Յ Ա Ն

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Բ ա ց ա տ ր ա կ ա ն ց ու ց մ ու ը ն ք ն ե ր :

Գրագիտության դպրոցը աշակերտներին պիտի տա սխտեմատիկ գիտելիքների և ունակությունների վորոշ ծավալ թվաբանությունից և այդ գիտելիքներն ու ունակություններն արտադրական և հասարակ—քաղաքական աշխատանքի գործնականում կիրառելու հմտություն:

Վորպեսզի թվաբանության ծրագիրը լիովին մշակված լինի, անհրաժեշտ է յուրաքանչյուր դպրոցում բվարանության պարապմունքներին լիովին հատկացնել ժամերի այն քանակը, վորը ցույց է տրված ուսումնական պլանում: Այդ ժամերը պիտի խստիվ վորոշված լինեն դասացուցակում:

Թվաբանությունը ուսումնական պլանում և պարապմունքների դասացուցակում պիտի գրվի անկախ ուսումնական առարկայի տեղ:

Թվաբանության ամբողջ դասընթացքի մշակմանը հատկացրած է, ըստ ուսումնական պլանի, 150 ժամ: Ուսումնական նյութի ավելի հարմար կերպով պլանավորման համար, նմանապես և կոմպլեկտացումը (համալրացումը) հեշտացնելու նպատակով, դպրոցի ամբողջ առաջադրվող ծրագիրը բաժանված է 2 շրջանի, ըստ վորում ամեն մի շրջանը ընդգրկում է թվաբանական թեմաների վորոշ շրջան ծրագրի մշակման կարգով:

Ծրագրի հաջող իրականացման համար ամեն մի դասատու պիտի կազմի պարապմունքների սկզբում, դասարանի հետ ծանոթանալուց հետո, աշխատանքի արտագրական պլանը ամբողջ շրջանի համար: Համաձայն դպրոցի ընդհանուր ուսումնական պլանի աշխատանքի արտագրական պլանում ցույց տրված պիտի լինի թե վոր ժամերի պիտի մշակվի ծրագրի ամեն մի թեման:

Պլանը չպիտի իջեցնի ծրագրի ծավալը և չպիտի խախտի նրա սխտեմը:

Աշակերտների հառաջագիմության հաշվառքը պիտի տարվի ուսուցչի կողմից մշտապես, ուսումնական աշխատանքի ամբողջ ընթացքում: Ամեն մի աշակերտ պիտի ստանա համապատասխան գնահատական՝ յուրացրել է, արդյոք, նա տվյալ թեման, թե վոչ (ստուգողական առաջադրությունների միջոցով, տրված հարցերի պատասխանների, անային առաջադրությունների կատարման և այլն միջոցով):

Թվաբանության պարապմունքների ժամանակ պիտի պահպանվեն՝ սխտեմը և խիստ հետևողականությունը առաջադրված նյութի մշակման մեջ:

Հետեյալ ունակութեան մշակմանն անցնել կարելի յի մի-  
այն այն թեպէտեւ, յերբ նախընթաց ունակութեանը հաստատա-  
պես և գիտակցորեն յուրացված կլինի:

Պարապմունքներէ հենց սկզբից պիտի հաշվի առնել աշա-  
կերտներէ ամբողջ կենսական փորձառութեանը, նրանց գիտելիք-  
ները և մտքի մեջ հաշվելու հմտութեանները:

Թվաբանութեան պարապմունքների ժամանակ պիտի ոգտվել  
աշխատանքի այնպիսի մեթոդներից ու ձևերից, վորոնք պարու-  
նակում են իրենց մեջ աշակերտների ինքնագործունեյութեան  
ակտիվութեան ելեմենտներ, վորոնք տեղ են հատկացնում աշա-  
կերտների ինքնուրույն աշխատանքին և նպաստում են իրանց  
գիտակցորեն և հաստատապես յուրացնելու մշակվելիք նյութը:

Անհրաժեշտ է, վարպետի աշակերտները ակտիվ մասնակ-  
ցութեան ունենան նյութի մշակման մեջ: Բոլոր յեզրակացու-  
թեանները, վորոնք արվելու յեն նյութի մշակման ժամանակ,  
արվում են աշակերտների կողմից, ուսուցչի ղեկավարութեան  
տակ, գիտողութեաններէ հիման վրա, մի շարք մտորոջ հարցե-  
րից հետո, գրված ուսուցչի կողմից խնդիրների և որինակների  
լուծման ժամանակ: Կանգ առնենք հանման գործողութեան մշակ-  
ման 2 որինակների վրա (փոխ առնելու դեպքում):

Առաջին որինակը:—Ուսուցիչը սկսում է բացատրել, վոր  
հանման դեպքում, յերբ հանելիի համապատասխան թվանշանը  
մեծ է նվազելիի համապատասխան թվանշանից, հարկավոր է  
նվազելիի հարեան բարձր կարգի թվանշանից առնել մեկ միավոր,  
բաժանել այն 10 ցածր կարգի միավորների, ավելացնել ունե-  
ցած նվազելիի միավորներին և կատարել հանումն: Այդպիսի բա-  
ցատրութեան դեպքում աշակերտները կարող են պատասխանել  
ընդունել և մեքենաբար յուրացնել պատրաստի կանոնը:

Այդպես յուրացրած կանոնը չի կարող յերկար մնալ աշա-  
կերտի հիշողութեան մեջ և անսխալորեն կիրառվել նրա կողմից  
գործնականում:

Յերկրորդ ձևը.—Ավելի գիտողական դարձնելու համար  
զասատուն առաջարկում է հանումը կատարել համրիչի վրա:

Յերբ հարկավոր է դուրս ձգել ավելի քանակութեամբ վոս-  
կրակոճակ, քան թե կա տվյալ յերկաթալարի վրա, զասատուն  
մտորոջ (միտքը պարզող) հարցերի միջոցով աշակերտներին բե-  
րում է այն յեզրակացութեան, վոր վոսկրակոճակների պակասող թի-  
վը կարելի կլինի դուրս գցել միայն այն ժամանակ, յերբ բար-  
ձր լարի մի կոճակը մանրացնենք ցածր լարի 10 կոճակների:  
Իրանից հետո զասատուն անցնում է գրավոր հանմանը, իսկ  
աշակերտները բոտ համրիչի վրա հանման անալոգիայի (համա-  
նմանութեան) յեզրակացում են, վոր գրավոր հանման ժամանակ  
ևս պիտք է բարձր կարգի մեկ միավորը համապատասխան ձևով  
մանրացնել ցածր կարգի 10 միավորների: Այդպիսի մշակման  
դեպքում նյութի յուրացումը կզառնա ավելի ակտիվ, գիտակցա-

կան և խորամիտ, կպահպանվի աշակերտի հիշողութեան մեջ և  
անսխալ կը կիրառվի գործնականում:

Իսասովանդութեանը պիտի լինի կոնկրետ, գիտողական:  
Հիմնական հասկացողութեանները պիտի դուրս բերվեն կոնկրետ  
ձևերից: Թվաբանութեան վորեւ բաժնի ուսուսնասիրութեանը  
պիտի սկսել կոնկրետ խնդրից: Մի շարք այդպիսի խնդիրների  
լուծման հիման վրա պիտի տանել աշակերտներին դեպի վորոջ  
յեզրակացութեաններ:

Ուսուցիչը պիտի մանրագնին, հաջորդաբար և սխտեմա-  
տիկ կերպով բացատրի յուրաքանչյուր մշակվելիք թեմայի հիմ-  
նական հարցերը, պարզաբանի թեմայի վերաբերյալ տրպային  
խնդիրներն ու վարժութեանները և ետ հաշվի ձևերն ու գրանց-  
ման տեսակները: Նյութի գիտակցական, խորամիտ յուրացման  
հիմունքների վրա՝ անհրաժեշտ աղյուսակներն ու կանոնները  
պիտի բերանացի սովորվեն:

Ամեն մի առանձին պարապմունք պիտի ավարտված ամբող-  
ջութեան ներկայացվի: Նա պիտի նվերված լինի վորեւ մեկ ունա-  
կութեան մշակմանը: Բայց այդ ավարտված ամբողջութեանը  
միևնույն ժամանակ պիտի գտնվի սերտ կապի մեջ անցածի հետ:  
անհրաժեշտ է աշխատել, վոր նոր հայտնութեանները կապվեն  
այն հսերի հետ, վոր արդեն ունեն աշակերտները:

Ունակութեանները թվաբանական գործողութեանների մեջ  
ամենալավ կերպով ձեռք են բերվում նպատակահարմարորեն—  
ընտրված թվային նյութերի վրա կազմած վարժութեանների  
միջոցով, այսպես կոչված թվային որնակների վարժութեանների  
վրա: Ամեն մի վերացական թվային նյութի վերաբերյալ հա-  
շիվներ կատարելու աշխատանքների ժամանակ հարկավոր է հի-  
շել, վոր այդ տեսակի աշխատանքը հանդիսանում է միայն մի-  
ջոց, իսկ թվաբանութեան պարապմունքների նպատակը լինելու-  
յի—ձեռք բերած գիտելիքները և ստացած ունակութեանները  
ավելացնել խնդիրների լուծմանը: Խնդիրները պիտի տան թվա-  
բանութեան՝ կյանքի հետ, սոցիալիստական շինարարութեան  
հետ կապի կոնկրետ ձևը:

Այդ պատճառով ել ուսուսնական ժամանակի նշանավոր  
մասը պիտի հատկացված լինի խնդիրների լուծմանը: Աշակերտ-  
ները պիտի կարողանան վոչ միայն անսխալ կերպով կատա-  
րել թվաբանական գործողութեանները, այլ և կարողանան կիրա-  
ռել նրանց խնդիրների լուծման մեջ:

Խիստ ցանկալի յի վոր աշակերտները զարոցում կարողա-  
նան ինքնուրույն խնդիրներ կազմել՝ նախորոք տված առաջա-  
դրութեանների համաձայն, նրանց ձեռքով հավաքած նյութերի  
հիման վրա՝ ամենորյա աշխատանքի տարբեր շրջաններից վեր-  
ցրած: Իպրոցում կատարած զբաղոր հաշիվների հետ միասին ան-  
հրաժեշտ է զբաղվել և բանավոր հաշիվ: Բանավոր հաշիվը զբա-  
րոցում պիտի տարվի ամբողջ դասընթացի տևողութեան ընթաց-

քում: Այս զեպքում բանավոր կերպով պիտի վճարեն վոչ միայն վերացական թվային որինակներ, այլ և խնդիրներ՝ իրենց պայմաններով: Այդպիսի բարդ բանավոր հաշիվները ժամանակ ոչ տակար և սովորեցնել գրելու միջանկյալ հետևանքները: Որինակ՝  $12 \times 17 =$  Գազմապատկում ենք  $12 \times 20$ . գրում ենք հետևանքը՝ 240. Բազմապատկում ենք 12—ը 3—ով, գրում ենք 37. 240—ից հանում ենք 36.

Մասամբ անհրաժեշտ և սովորեցնել աշակերտներին մոտավորապես հաշիվ կատարելիք գործողութայն հնարավոր հետևանքը, վոր նշանավոր չափով կապահովի աշակերտին կուպիտ սխալներին և մի շարք զեպքերում կտանի նրան զեպի ուղիղ լուծումն: Որինակ.—245—ը բազմապատկել 106—ով: Տալիս ենք մոտավոր հաշիվը՝  $245 \times 100 = 24,500$ . Այդ մոտավոր հաշիվը կվերացնի հաճախ պատահող սխալը՝ 245—ը բազմապատկումը 106—ի փոխարեն—16—ով: Ելի մի որինակ՝ 666. 333—ը բաժանել 111—ի վրա: Մոտավոր հաշիվը—666.333: 100 կտա 6. 663, հետևապես քանորդում պիտի ստացվի 4 թվանշան: Մոտավոր հաշիվը կվերացնի հնարավոր սխալը՝ ստանալը քանորդում 63, փոխանակ 6. 003—ի, այսինքն՝ քանորդում քտանիշ թիվ ստանալու փոխարեն յերկանիշ թիվ ստանալը:

Անհրաժեշտ են նաև վարժությունները համարելի վրա: Նրանք իմաստալից են դարձնում աշակերտների աշխատանքը, ինչպես համարակարգը սովորելու ժամանակ, այնպես ել յուրաքանչյուր առանձին թվաբանական գործողությունները սովորելիս:

Հենց առաջին պարապմունքներից, վորպես կանոն, աշակերտները իրենք պիտի ստուգումներ կատարեն իրենց յուրաքանչյուր աշխատանքի վերաբերմամբ: Կարողանալ ստուգել կատարած հաշիվը մի այլ գործողութայն ոգնությամբ, այդ բանը աշակերտների մեջ ստեղծում և վստահություն իրենց ուժերի վրա, վորը նամանավանդ անհրաժեշտ և խնքնուրույն աշխատանքների ժամանակ:

Իլրումն թվաբանական պարապմունքների՝ դպրոցում, անհրաժեշտ և աշակերտների համաչափ աշխատանքը նաև տանը: Աշակերտների տնային աշխատանքի նպատակն է.—կրկնել զըզրոցում մշակած նյութը, վարժությունների միջոցով ամրապնդել ստացած ունակությունները (գործողությունների տեխնիկան), իսկ գլխավորն է՝ ավելացնել կենսական խնդիրներ լուծմանը—ձեռք բերած հմտությունները: Տնային աշխատանքների համար նյութի ընտրության մեջ պիտի պահպանված լինի անհատական մոտեցում զեպի առանձին աշակերտները. անհրաժեշտ և առանձին աշխատանքներ տալ ուժեղ և թույլ աշակերտների համար: Իստատուն պիտի ստուգի աշակերտների բոլոր աշխատանքները: Հակառակ զեպքում հնարավոր սխալները կմնան անուղղելի և աշակերտները կընտելանան սխալ գործողություններ կատարելուն, հետևապես և, կստացվեն սխալ, անճիշտ ունակություններ:

# Ծ Ր Ա Գ Ի Ր

Ծ Ր Ա Գ Ի Ի Ծ Ա Վ Ա Լ Ը (150 ժամ):

Ամբողջ թվերի ընթերցումն և գրանցումն միլիոնի շրջանում: Ամեն մեծության ամբողջ թվերի գումարումն ու հանումը: Ամբողջ թվերի բազմապատկումն ու բաժանումը միանիշ, յերկանիշ, յեռանիշ թվերի վրա: Յերկարության և հեղուկ մարմինների մետրակոն չափերը:

Ծրագրի բովանդակությունը և նրա մշակման հաջորդականությունը

1. Առաջին շրջան (50 ժամ)

1. Ընթերցում, գրանցում և հաշվումն համրելի վրա՝ առաջին տասնյակի թվերի: Կլոր տասնյակների հարյուրի շրջանում: Հաշիվ կլոր տասնյակներով: Ջերոյի նշանակությունը թվանշաններով թվեր գրելու ժամանակ: Մնացած թվերը հարյուրի շրջանում: Յերկանիշ թվերի հաշիվներ համրելի վրա (6 ժամ):

2. Գումարումն՝ բանավոր և համրելի վրա—հարյուրի շրջանում մի տողի վրա գրելու հետևողականությամբ: Գումարման նշան՝ + (պլուս): Հավասարության նշան՝ = (4 ժամ):

3. Հանումն՝ բանավոր և համրելի վրա—հարյուրի շրջանում մի տողի վրա գրելու հետևողականությամբ: Հանման նշան՝ — (մինուս):

Հանման ստուգումն գումարման միջոցով: Գումարման ստուգումն հանման միջոցով (6 ժամ):

4. Գումարման և հանման հեշտացրած ձևերը: Գումարելիների իրար տակ գրելը: Գումարելիների կլորացումը լրիվ տասնյակներով: Հանելի կլորացումը լրիվ տասնյակներով (4 ժամ):

5. Կարգաբ, գրել և գցել համրելի վրա յեռանիշ և քառանիշ թվին: Ծանոթություն թվակարգի մասին: Ծանոթություն միավորների դասի և հազարավորների դասի մասին (8 ժամ):

6. Թվերի գրավոր հանումն (քառանիշ թվերի շրջանում): Նվազելի, հանելի, տարբերություն:

Հանման ստուգումն գումարումով: Գումարման ստուգումն հանումով: Թվերի հանումը՝ տրված մանեթներով և կուպեկներով (8 ժամ):

7. Թվերի գրավոր գումարումն (քառանիշ թվերի շրջանում): Գումարելի, գումար: Թվերի գումարումն՝ տրված մանեթներով և կուպեկներով (9 ժամ):

8. Հոտմեական թվանշաններ: Հոտմեական թվանշաններով թվերի ընթերցումն ու գրանցումը յերեսուցի (30) շրջանում

(2 ժամ):

Համարակարգ մինչև 1. 000. 000

II. Յ ե Ր Կ Ր Ո Ր Է Դ Զ Ը Զ ա ն (100 ժամ):

1. Կրկնություն (6 ժամ):

2. Միանիշ թվերի բազմապատկումն: Բազմապատկման նը-  
շանը՝ X. Բազմապատկելի, բազմապատկիչ, արտադրյալ: Միանիշ  
թվերի բազմապատկության աղյուսակը: Արտադրյալի անփոփոխ  
մնալը բազմապատկելիի և բազմապատկիչի տեղափոխության ժա-  
մանակ: Բազմանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվով: Բազ-  
մապատկելիի մեջ զերոններով բազմապատկման դեպքեր (12 ժամ):

3. Յերկանիշ թվերի բաժանումը միանիշ թվի վրա: Բա-  
ժանման նշան (:): Բաժանելի, բաժանարար, քանորդ: Բազմապատ-  
կման աղյուսակից ոգտվելը քանորդ գտնելու ժամանակ: Մնա-  
ցորդը բաժանման ժամանակ: Բազմանիշ թվերի բաժանումը մի-  
անիշ թվերի վրա: Բաժանման դեպքեր՝ յերբ քանորդի մի վորքե  
կարգում ստացվում են զերոններ: Բաժանման ստուգումը բազմա-  
պատկումով և բազմապատկման ստուգումը բաժանումով (20 ժամ):

4. Հնգանիշ և վեցանիշ թվեր: Կարգալ, գրել և հաշվել համ-  
ըիչի վրա: Հնգանիշ և վեցանիշ թվերի գումարումն ու հանումը  
(6 ժամ): Գաղափար՝ միլիոնի մասին (հազար հազարավոր) — (10  
ժամ):

5. Թվերի բազմապատկումը 10—ով, 100—ով, 1000—ով և  
այլն:

Թվերի (բավականաչափ զերոններով վերջացող) բաժանումը  
10—ի, 100—ի, 1000—ի վրա (4 ժամ):

6. Յերկարության մետրական չափերը: Մետր, դեցիմետր,  
սանտիմետր, միլիմետր: Կիլոմետր:

Ուղիղ գծի կտորի չափերը: Թղթի վրա գծագրել վորոշ յեր-  
կարության ուղիղ գծի կտորներ՝ 7 սմ. 5 սմ. և այլն:

Մանրության մետրական չափերը. գրամ, կիլոգրամ, ցենտո-  
ներ, տոնն:

Հեղուկների չափը—լիտր:  
Սոշոր չափերի վերածումը ավելի մանր չափերի և մանր  
չափերի անդրադարձումը ավելի խոշոր չափերի (10 ժամ):

7. Միանիշ և բազմանիշ թվերի բազմապատկումը այնպիսի  
թվերով, վորոնք կազմված են միավորներից՝ վերջից ունենալով  
մեկ կամ մի քանի զերոններ (որինակ՝ 20—ով, 400—ով, 700—ով  
և այլն):

Բազմանիշ թվերի բազմապատկումը յերկանիշ թվերով: Բազ-  
մապատկումը յեռանիշ թվերով: Բազմապատկման դեպքեր, յերբ  
զերոններ են հանդիպում բազմապատկելիների և բազմապատկիչ-  
ների մեջ—մեջ տեղը, վերջում (4 ժամ):

8. Բաժանումը կլոր տասնմակների վրա: Բաժանումը ամեն

տեսակի յերկանիշ թվերի վրա, յերբ վերջում մնացորդ է ստաց-  
վում (24 ժամ):

Բաժանման ստուգումը բազմապատկումով և բազմապատ-  
կման ստուգումը բաժանումով:

9. Կրկնություն (6 ժամ):

5. ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒՅՅՈՒՆ

Անգրագիտության դպրոցում քաղաքագիտությունը խաղայու-  
յե դեկավար դեր: Քաղաքագիտությունը աշակերտին սովորեցնում է  
ճանաչել իր շրջապատը, պարզել իր պրոլետարական—դասակար-  
գային հարաբերությունը դեպի տարվող քաղաքականությունը,  
ոժանդակում է մշակելու իր մեջ կոմունիստական աշխարհայացք  
և ակտիվ մասնակցություն ստեղծելու սոցիալիստական շինարա-  
րության մեջ: Քաղաքագիտության ծրագիրը նեղ մասնագիտական  
բնույթի չունի: Նա բնական և սերտ կապով կապված է մնացած  
ծրագրային նյութի հետ:

Անգրագիտության դպրոցի այբբենարանը գրելավորապես  
կառուցված է քաղաքական բնույթ կրող լոգոսոֆների վրա: Դաս-  
ագրքի առանձին հոդվածները անցնելիս, հարկավոր է, գոր աշա-  
կերտները լավ հասկանան և ըմբռնեն կարգացածը: Այդ նպատա-  
կին համել կարելի յե դասագրքի յուրաքանչյուր լոգոսոֆի առ-  
թիվ զրույցներ կազմելով: Զրույցը պիտի լինի համառոտ և դա-  
սախոսության բնույթի չկրի. նա պիտի առաջ բերի աշակերտնե-  
րի մեջ մտքերի փոխանակություն, ուստի պիտի կապված լինի  
աշակերտների աշխատանքի պայմանների ու կենցաղի հետ: Յեթե  
կա համապատասխան բնորոշ նյութ, հարկավոր է զրույցների  
ժամանակ ոգտագործել:

Գրագիտության դպրոցի ուսուցիչը ինկատի պիտի ունենա,  
վոր՝

1) Աշակերտների հասարակական—քաղաքական դաստի-  
արակությունը չպիտի սահմանափակվի նրբանույ, ինչ վոր նրանք  
ձեռք են բերել դպրոցում, այլ ժիաժամանակ պիտի ոգտագործվեն  
նրանց համար դպրոցից դուրս ունեցած բոլոր հնարավորություն-  
ները, ինչպես որինակ, կյանքը կոլտոգում և հիմնարկություն-  
ներում, աշխատանքը հիմնարկություններում, խրճիթ—ընթեր-  
ցարանը, կարմիր—անկյունը, ակումբը և այլն:

2) Ուսուցման առաջին շրջանը դասագրքերով է լինում, ըն-  
թերցանության և գրավորի առթիվ տարվող զրույցները պիտի  
համառոտ կերպով պարզարանեն բովանդակությունը:

3) Այբբենը անցնելուց հետո զրույցները պիտի ծավալել  
ծրագրում ցույց տված համապատասխան ուսուցման նյութի  
համաձայն:

4) Ուսուցման ամբողջ ընթացքում, դասի վորոշ մասը, յեր-  
բեմն և մի քանի ժամ շարունակ, պիտի նվիրել հասարակական—  
քաղաքական զրույցներին սխտեմատիկաբար ոգտագործելով

կենտրոնական և տեղական լրագրներից վերցրած նյութեր:

### 6. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

#### ՅԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՄԱՍԻՆ:

Կուլտուրական հեղափոխութեան մարտական խնդիրներից մեկն՝ աշխատավորները աշխատանքի դաստիարակութեան, մեր յերկրի սոցիալիստական շինարարութեան մեջ գիտակցորեն ու ակտիվորեն մասնակցելու համար:

Գրագիտութեան ուսուցման ամբողջ աշխատանքը պիտի ոժանդակի կոմունիստական վոզով դաստիարակութեանը, աշակերտներին ներգրավելու սոցիալիստական շինարարութեան մեջ՝ ախտիվ ու գիտակցական մասնակցութեան ունենալու համար: Այդ քաղաքական—դաստիարակչական աշխատանքը կազմվում է հետևյալ մոմենտներից.—

- 1) Զրույց կազմակերպել հասարակական—քաղաքական թեմաների շուրջը ընթացիկ քաղ. դասի ժամանակ:
- 2) Ընթերցանութեան, գրավորի և հաշվի համար նյութեր ընտրել տեղական հասարակական կյանքից, պարզաբանելով այն ուղղութեամբ, վոր նրանք հետաքրքրութեան առաջ բերեն դեպի հասարակական յերևույթները, զարթեցնեն աշակերտների միտքն ու ակտիվութեանը, տան քաղաքական—դասակարգային ուղղութեան և աշխատունակութեան:

3) Գրագիտութեան դպրոցի ղեկավարը լիկկայանի իր աշխատանքի մեջ պիտի կապ հաստատի տեղական քաղ—լուս—հիմնարկների հետ (խրճիթ—ընթերցարանի, ակումբի, գրադարանի), վորպեսզի աշակերտները դպրոցն ավարտելուց հետո այդ կապը պահպանեն և շարունակեն ոգտվել այդ հիմնարկներից: Այդ նպատակով կարելի է կազմակերպել աշակերտների մասնակցութեամբ գրույցներ և դասախոսութեաններ խրճիթ—ընթերցարանում կամ ակումբում, կինո—պատկերներ և այլն: Խրճիթ—ընթերցարանի կամ ակումբի միջոցով աշակերտների մասնակցութեամբ կազմակերպել երգիչներին ղեկի սովխոզ, գործարան, թանգարան և այլն:

Գրագիտութեան ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ներգրավել հասարակական—քաղաքական աշխատանքների և իր քաղաքի, գյուղի, շրջանի սոցիալիստական շինարարութեան մեջ:

Այդ խնդիրը իրականացնելու նպատակով դպրոցը հետևում է իմանալու, թե ինչ շինարարական աշխատանքներ են տարվում տեղական քաղաքում, շրջանում, կոլխոզում, գյուղխորհրդի և նրա սեկցիաների կենդանացման գործում, կոոպերացիայի ամրապնդման և կուլտ—շինարարութեան ասպարիզում: Այդ շինարարութեան հարցերը մշակվում են ընթացիկ քաղաքի և այլ պարապմունքների ընթացքում:

Գլխոցը մասնակցում է հասարակական աշխատանքների

մեջ: Որինակ՝ կապ հաստատելով կուս. և կոմյերիտ բջիջների հետ, դպրոցը մասնակցում է դեմոնստրացիաներին, կուլտարաշխատանքին, սոցմարյակցութեաններին, խորհրդների վերընտրութեան աշխատանքներին, հացամթերման պայքարներին, կոնտրակտացիայի պայքարներին, ցանքաի, քաղհանի, բերքահավաքի կամպանիաներին, կոլլեկտիվացմանը, աշխատանքի ուսցիտնալ բաշխմանը արտադրութեան մեջ, հարվածային բրիգադների կազմակերպութեանը և այլն:

Գլխոցը կարող է հասարակական—քաղաքական աշխատանքներ տանել իր աշակերտների միջոցով, նրանց ընտանիքի անդամների ու հարեանների շրջանում, բացատրական աշխատանքներ կազմակերպելով որինակ՝ կոնտրակտացիայի առթիվ, նրանց կոլխոզները ներգրավելու համար, բաժանորդագրվելու փոխառութեաններին և այլն:

Գլխոցը պիտի հաշվի առնի այդ և ուղղութեան տա աշակերտների այդ աշխատանքին:

Գրագիտութեան դպրոցի և ընթացիկ քաղաքականութեան դասի ղեկավարները պիտի հաշվի առնեն աշակերտների կարիքներն ու տրամադրութեանները և այդ կարիքների համապատասխան բացատրական աշխատանքներ տանեն: Որինակ՝ յեթե աշակերտներին ալեկոծում է մի վոբլե յերևույթ, յեթե նրանք բաղիվում են մի վոբլե կուլախային, կրոնական կամ աղանդավորական ազիտացիայի հետ, այդ դեպքում պիտի այդ թշնամական ազիտացիային հակադրի կոմունիստական բացատրական աշխատանքներ:

Ուսուցիչը պիտի հաշվի առնի, վոր հասարակական—քաղաքական աշխատանքը յենթարկվելու է դպրոցական—դաստիարակչական նպատակներին:

### 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՔԸ


Վորպեսզի ընթերցանութեան զբաղմունքի և հաշվի նյութերը ողնեն կյանքից վերցրած հարցերի վերլուծութեանը, անհրաժեշտ է խիստ մոտեցում հարցերի ընտրութեան մեջ և նրանց ուսուցմանը խիստ հետևողականութեան, իսկ այդ հանդամանքը պահանջում է աշխատանքի պլանավորման և հաշվառքի անհրաժեշտութեան:

Աշխատանքի վորակի բարձրացումը հնարավոր է միայն աշխատանքի հաշվառման և պլանավորման գոյութեան դեպքում: Ճշմարիտ հիմքերի վրա դրված հաշվառքը կապ ալիլի գնահատելի հետևանքներ:

Գրագիտութեան դպրոցի պլանավորումն և հաշվառքը ընտրվում են հետևյալ մոմենտներով:—

1. Նախապես պարզել աշակերտների համոզմունքների, շահերի և գիտելիքների մասին, աշխատանքի անհրաժեշտությանը բավարարու-

1008 3943  
36281



թյունն չգտնող աշակերտները, հաճախ հեռանում են գրադարանը՝  
թյան դպրոցից:

2. Կազմել ուսումնական պլանը, համաձայն ծրագրի և սը-  
կըզբնական հաշվառքի տվյալների:

Պլանի մեջ պիտի նախատեսնվի վորքան ժամանակ է հար-  
կավորվելու այս րամ այն թեմայի և ծրագրված գիտելիքները  
մշակման համար, կազմակերպչական և աշխատանքային ունակու-  
թյունների համար: Աշխատանքի պլանի մեջ պիտի ցույց տրվեն  
թեմայի միայն հիմնական մոմենտները, իսկ թեմայի ստորաբաժա-  
նումները մտցվում են որպես յոթային պլանի մեջ:

Պլանի մեջ ցույց են տրվելու նաև աշակերտներին հասարա-  
կական կազմակերպութայությունների (Կորչի անգրագիտությունը, Մո-  
պլը և այլն) մեջ ներգրավման ձևերը, այլև ինչ հասարակական-  
քաղաքական աշխատանքներ պիտի տրվեն (մասնակցություն  
ցանքսի կամպանիաներին, ծխախոտի միջերմանը և այլն):

Համաձայն ընդհանուր պլանի, ուսուցիչը կազմում է պարապ-  
մունքների որպես յոթային պլան, վորոշ թեմաների համար և վո-  
րոշ ժամանակամիջոցի համար (6-որյակի, մի ամսի և այլն):

Աշխատանքի ընթացիկ հաշվառքը ուսուցիչը գրի յե անց-  
նում պարապմունքի սովորական որպես տրի ձևով, նշանակելով  
թե վոր չափով յուրացրել է աշակերտը անցնելիք նյութը ու  
ինչ բանի վրա ուշադրություն պիտի դարձնել:

Աշխատանքի պարբերական հաշվառքը հարկավոր է անցկաց-  
նել մի շարք թեմաների մշակումից հետո, վորոնք պարզաբանում  
են վորոշ հարցեր, նպատակ ունենալով ցուցադրել նվաճումներն  
ու բացերը, ըստ վորում հետագա աշխատանքների ժամանակ ան-  
հրաժեշտ է վերացնել այդ բացերը:

Աշխատանքի ընդհանուր հաշվառման վերջնական հետևանքը  
արտահայտվում է աշակերտների ավարտումով և նրանց կիսա-  
գրագետների դպրոցը փոխադրելով: Այստեղ պիտի տրվի գրագի-  
տության դպրոցի աշխատանքների ընդհանուր գումարը, պիտի  
պարզվեն բացերն ու նվաճումները և այդ նվաճումների հիման  
վրա աշակերտների մեջ հետաքրքրություն ծագեցնել իրենց գի-  
տելիքների հետագա ընդլայնումն և կիսագրագետների դպրոցը  
քոխադրվելու ցանկություն. այդ նվաճումների հիման վրա նաև  
պիտի հասարակական կարծիք ստեղծել, վորը ողնելու յե մնա-  
ցած անգրագետներին գրագիտության դպրոցը ներգրավելու:  
Ավարտման ակտին պիտի տալ գործնական և հանդիսավոր ձևա-  
կերպություն:

Գործնական ձևակերպությունը արտահայտվելու յե աշակերտ  
ների գիտելիքների գնահատման ակտին՝ պրոֆիտությունների,  
կուակազմակերպությունների, գյուղխորհրդի և աշակերտական  
կազմակերպության ներկայացուցիչների մասնակցութամբ:

Հանդիսավոր մասը—նույն կազմակերպությունների ներկա-  
յացուցիչների մասնակցությամբ հրավիրված ընդարձակ նիստով:

Այդ դպրոցի ղեկավարը զեկուցում է տալիս աշխատանքի մեջ  
ձեռք բերած հաջողությունների և բացերի մասին: Յեղութ են  
ուսենում կազմակերպությունների ներկայացուցիչները, նմանա-  
պես և աշակերտները: Կատարվում է հարվածայինների մրցանա-  
կաբաշխություն:

Ուսուցիչը շարունակելու անհրաժեշտությունը առանձնապես  
պիտի ընդգծվի և բացատրվի ավարտման ակտի ժամանակ:

Ավարտման ակտի վ ցուցադրվում են գրագիտության դպ-  
րոցի պատկերը լիովին արտահայտող աշակերտական աշխա-  
տանքները:

Աշակերտներին կիսագրագետների դպրոցը փոխադրելու ամ-  
բողջ նախապատրաստական աշխատանքը կատարում է ուսուցի-  
չը:

### 8. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՔՈՂՆԵՐԸ

Գրագիտութան դպրոցի խնդիրներն ու ծրագրերը պահան-  
ջում են աշխատանքների մեջ կիրառելու ակտի կատարելագործ-  
ված ակտիվ մեթոդներ, վորոնք ապահովելու յեն առաջադրված  
խնդիրների նվաճումները: Այդպիսի ակտիվ մեթոդներից մեկը,  
առաջին հերթին, հանդիսանում է սոցմրցակցությունը և հարվա-  
ծայնությունը:

Այդ հիմնական մեթոդին կից կիրառվում են նաև՝ հետա-  
խուզական, եքսկուրսիոն, պատկերավոր—դիտողական, կենդանի  
խոսքի մեթոդները:

Կիրառումն այս կամ այն մեթոդի, կամ մի շարք մեթոդնե-  
րի փոխանակությունը՝ կախված է մշակվելիք ուսումնական նյու-  
թի բովանդակությունից և աշակերտների խմբակի անհատական  
առանձնահատկություններից:

#### II

### ԳՐԱԳԻՏՈՒՅՑԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Գրագիտության ուսուցման ծրագրերը հաշված է 180 ուսում-  
նական ժամ 4-ամսյա ուսուցման շրջանի ընթացքում, հաշվելով  
3 պարապմունքի որ վեցորյակում, յուրաքանչյուր պարապմունքի  
որը՝ 3 ժամ տևողությամբ:

Ծրագրի այբբենական մասին տրվում է, մոտավորապես,  
ուսումնական ժամանակաշրջանի կեսը, իսկ մնացած ժամանակը  
տրվում է հետաքրքենական շրջանին:

Հասարակական—քաղաքական կազմակերպությունների հետ  
կապված դպրոցի և աշակերտների հասարակական—քաղաքական  
աշխատանքները, աշակերտների քաղուսհիմնարկների հետ ծանո-  
թացումը և եքսկուրսիաները կատարվում են ուսումնական ժամնե-  
րից դուրս:

# Ծ Ր Ա Ք Ի Ր

Հասարակա—քաղաքական հարցերի (ներածական մաս. անգրադիտութեան դպրոցի ընդհանուր քաղաքական խնդիրները XVI Կուսհամագումարի վարչութիւնը):

1-ին թեմա.—2-րդ հնգամյակը. 1-ին յենթաթեմա.—1-ին հնգամյակի հանրագումարը (ընկ. Ստալինի ղեկուցը 1933 թվի հունվարի պլենումին):

2-րդ թ. Խ. Հ. Մ. —ի և Ս. Ս. Ֆ. Խ. Հ.—ի 2-րդ հնգամյակը ժողովրդական անտեսութեան առանձին ճյուղերի վերաբերյալ:

3-րդ 2-րդ հնգամյակի քաղաքական խնդիրները:

4-րդ 2-րդ հնգամյա պլանը Արխագիտայում Ս. Խ. Հ. Մ.—ի հնգամյակի կապակցութեամբ. ա) Ինդուստրացումն. Բզիբկոմբէնատի և Տղվարչեյլյան հանքի շինարարութիւնը, վիթխարի ելեկտրոկայանի շինարարութիւնը Տղվարչեյլատրոյի ածուխի թափ-թփովները ուժով, Սուխ-գեսի շինարարութիւնը, ալյուսի գործարանի և ծխախոտի Ֆարբիկայի վերակառուցումը:

2-րդ հնգամյակում պիտի կառուցվեն 4 խոշոր ելեկտրոկայաններ՝ Բզիբ, Գուստա և Կոզոր գետերի վրա: Ածուխի տարեկան հանույթը պիտի հասցնել մինչև 500. 000 հազար տոննի:

Պիտի կատարվեն կապարի և ցինկի հանույթներ (մշակումը Գուդաուտի ուսյոնի Զիրշա լեռան վրա):

Բավականաչափ ծավալվելու յե քիմիական արդյունաբերութիւնը խորդնու (գերանի) և այլ յեթերաբերները վերամշակման գործում յեթերային յուղեր ստանալու համար:

2-րդ հնգամյակում պիտի ավարտվի Բզիբի և Ենգուրի անտառա—թղթամշակման կոմբինատների շինարարութիւնը:

Ավարտվելու յե Սև—ծովյան յերկաթուղագծի կառուցումը:

2—րդ թեմա.—Գյուղական անտեսութեան կոլեկտիվացումն:

ա) Գուղատնտեսութեան զարգացման յերկու ուղիները—կապիտալիստական և սոցիալիստական:

բ) Կոլեկտիվացումն՝ վորպես գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ճանապարհ:

գ) Կոլտոգային շինարարութեան ձևերը (հող. մշակ. ընկ., արտել, կոմունան):

դ) Արտելը՝ վորպես կոլտոգային շինարարութեան զարգացման հիմնական և մասսայական մի ձև, տվյալ ետապում:

յե) Աշխատանքի կազմակերպութիւնը կոլտոգում (արտադրական պլան և հաշվառք, ուժերի բաշխումն, աշխատանքի կոմունիստական ձևերը տեխնիքական բազա, գործարք, աշխատանքի բրիգադային ձև):

զ) Կուլտ—կենցաղային կարիքների հոգացողութիւնը:

ե) Կոլտոգինարարութեան բնութագիրը Արխագիտայում: Պայքար հանուն բերքատուութեան բարձրացման Արխագիտայում: Տեղական ցանքային կամպանիաներ: Կոնտրակտացիան և նրանշանակութիւնը: Քաղհանի և բերքահավաքման կամպանիաներ: Հացամթերումներ (Ս. Ս. Հ. Մ. հացահատիկները կուլտուրաների շրջաններում):

Ծխախոտի մթերումն Արխագիտայում: Տեխնիքական կուլտուրաների տարածումն Արխագիտայում և նրանց նշանակութիւնը:

Պայքար կոլտոգների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման և բերքատուութեան բարձրացման համար: Համկոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ (ԱԿԿ) հունվարյան Պլենումը՝ «գյուղատնտեսութեան հիմնական խնդիրները» —ի մասին:

Աշխատանքի կազմակերպման համար տարվող աշխատանքների հետադա ամրապնդումը պետձեռնարկներում և կոլտոգներում, արտադրութեան տեխնիկայի իսկական տիրապետումն:

Սոց-կարգապահութեան տարածումը կոլտոգներում, կոլտոգային ախտիվ ամրապնդումը նրանց մեջ և պայքար կուլակային ազդեցութեան ցուցադրումների դեմ: Սոց-մրցակցութեան և հարվածայնութեան աճը:

Կոլտոգների կազմակերպչական—տնտեսական ամրապնդումը կոլտոգներին ունևոր կյանքին անցնելու ուղին եր:

«Բոլոր կոլտոգները դարձնել բոլշևիկական, իսկ կոլտոգներին ունևորներ»:

Համկոմկուսի Կենտկոմի և Միութենական Ժողկոմխորի Վորոշումը՝ ամեն մի կոլտոգնիկ կովի տեր պիտի գառնա:

ը) Սովխոգներ, ՄՏԿ—ի քաղբաժինները և նրանց ղեկավար դերը կոլտոգինարարութեան մեջ:

թ) Համատարած կոլեկտիվացումը՝ վորպես կուլակութիւնը, իրրև զասակարգ լիկլիդացիայի յենթարկելու բազա:

3—րդ թեմա.— Կուլտուրական հեղափոխութիւնը և պայքար կազրեր պատրաստելու համար.

ա) Կուլտուրական շինարարութեան հնգամյա պլանը.

բ) Ընդհանուր պարտադիր ուսում և անգրագիտութեան վերացումն.

գ) Կազրեր պատրաստելու խնդիրները և դպրոցի պոլիտեխնիկացումն.

դ) Բանվորական կոլտոգային կրթութեան սիստեմը.

յե) Պայքար հանուն նոր կենցաղի.

զ) Կանանց ներգրավումը սոցիալիստական շինարարութեան մեջ.

ե) Պայքար կրոնի դեմ: Թեմաները պիտի հարուստ լինեն տեղական բնույթ կրող նյութերով:

4—րդ թեմա.—Պորհուրդների կառավարութիւնը: ա) Հոկտեմբերյան հեղափոխութիւնը.

բ) Վ. Ի. Լենինը—Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջնորդ.

գ) Համկոմկուսը՝ կազմակերպողն ու ղեկավարն է բանվոր դասակարգի.

դ) Պրոլետարիատի դիկտատուրան.

յե) Ազգերի ազատագրութեանը.

զ) Աբխազիայի խորհրդայնացումն.

ե) Խորհուրդների վերընտրութեանը և խորհուրդների կոնկրետ խնդիրները ժողովրդական անտեսութեան վերակառուցման առկարիքում:

ը) Մեր խորհուրդի աշխատանքն ու նրա սեկցիաները և հերթական խնդիրները նրա պլանում:

թ) Վրաստանի ռալիոն և ԼԿՅԵՄ: Գյուղական կուսը՛՛՛ը և կոմյերիտ բ՛՛՛ը, նրանց աշխատանքները:

ժ) Կոպեթրացիան և նրա դերը ժողովրդական անտեսութեան զարգացման գործում:

6—րդ թեմա.—Կուսակցութեան պայքարը հանուն Լենինյան ուղիի.

ա) Համառոտ պատմական ակնարկ—տրոցկիզմի ձախ թեքման ծագումը: Տրոցկիզմի սոցիալական արմատներն ու ելուցիկները: Հակահեղափոխական տրոցկիզմը՝ վորպես համաշխարհային բուրժուազիայի առաջավոր բանակը:

բ) Այլ թեքումն, նրա ելուցիկները և սոցիալական արմատները.

Այլ թեքումը, վորպես գլխավոր վտանգ սոցիալիստական շինարարութեան զարգացման տվյալ ետապում.

գ) Լենինյան կուսակցութեան պայքարի անհաշտութեանը յերկու ֆրոնտի գեմ.

դ) Համկոմկուսի իդիոլոգիական պայքարը հանուն մարքսիզմի—Լենինիզմի մաքրութեան և ընկ. Ստալինի—«Բոլշևիզմի պատմութեան մի քանի խնդիրների մասին» նամակի նշանակութեանը:

6—րդ թեմա.—Հանուն համաշխարհային հոկտեմբերի.

ա) Խ. Ս. Հ. Մ. միջազգային և ներքին դրութեանը

բ) Խ. Ս. Հ. Մ.—աշխատավորների յեղբայրական միութեանը

գ) Խ. Ս. Հ. Մ.—Կապիտալիստական շրջապատութեան մեջ.

դ) Ճգնաժամը կապիտալիստական յերկրներում և պրոլետարիատի հեղափոխական վերելքը.

յե) Կարմիր բանակը և Խ. Ս. Հ. Մ.—ի պաշտպանութեանը.

զ) Պաշը—Ավիաքիմը: Նրա նշանակութեանը գյուղական անտեսութեան բարձրացման և յերկրի պաշտպանունակութեան ամրապնդման մեջ:

ը) Միջազգային պրոլետարական հեղափոխութեանը և Կոմինտերնը:

### 1. ԸՆԹԱՑԻՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ—12 ԺԱՍ

1. Աբխազիայի նորակառույցները, նրանց աշխարհագրական դիրքը: Նորակառույցների տնտեսական և քաղաքական նշանակութեանը: Կառույցների արժեքը: Ինչ է խոզրասշոտը: Կառույցների նախագծերը և ընդհանուր պլանավորումն: Կառույցների նախագծերը և ընդհանուր պլանավորումն: Կառույցների պատրաստակառուցիկները աշխատանքներ սկսելու մեջ: Շինանյութեր պատրաստելը: Կառույցների ապահովութեանը մեքենաների և բանվորական ուժի կողմից: Կառուցումների խնդիրները գալիք սեզոնի համար: Շինարարական ֆինպլան: Ով է սանում շինարարութեանը և ղեկավարում այն: Շինարարութեան ղեկավարների պարտականութեանը: Միավորութեանը կառույցներում, նրա ելուցիկները: Պրոֆսիոնալիստական որգանները կառույցներում, նրանց դերը և նշանակութեանը: Արտադրական խորհրդակցութեանը: Կուսակցական կոմյերիտիստիկական կազմակերպութեանը կառույցներում: Յեռանկյունի: «Յեռաներս դեպի արտադրողություն» լուզունգի ելուցիկները: Գործադրվող կողոպուտը (պայմանագրի) կառույցներում: Փոխադարձ պարտավորումները ըստ պայմանագրի: Աշխատանքի նորմաները, դնահատութեանը և պայմանները կառույցներում: Ընկ. Ստալինի 6 ցուցմանքների կենսադործումն: Ներքին կանոնադրութեանը: Բանվորների մասնակցութեանը կառույցների կազմակերպության և կյանքի մեջ:

Մեր կառույցը—սոցիալիստական կառույց է: Մեր կառույցի տերը—բանվոր դասակարգն է: Մեր և կապիտալիստական կառույցները (համեմատել և հակադրել կառույցների ավարտման ժամկետները և նրանց շահագործման ուղին):

Հարվածային տեմպերը աշխատանքի մեջ: Աշխատանքի սոցիալիստական ձևերը: Սոցիալիստական և հարվածայնութեանը: Հանդիպակաժ պլան, հասարակական բուքսիր: Պայքար հոսունութեան և չվանութեան դեմ: Անվտանգութեան տեխնիկան, հիմնական կանոնները նրա վերաբերյալ:

2. Հիմնարկը վորպես սոցիալական մի մարմին:

Սոցիալիստական և կապիտալիստական հիմնարկներ, նրանց տարբերութեանը: Հիմնարկը, վորպես տնտեսական մի ամբողջութեանը.—նրա խնդիրները, արդյունքը, հիմնական համաբուրժուանները (վեք), նրանց կապը միմյանց հետ: Արգֆինպլանը և հնգամյակը:

3. Ընդհանուր հասկացողութեան հում նյութի մասին և նրա մշակման տեխնոլոգիական ընթացքը:

4. Ընդհանուր հասկացողութեան արտադրութեան մեքենայացման մասին, մեքենաների և գործիքների գլխավոր մասերի անունները, նրանց գործադրումը արտադրական աշխատանքի մեջ:

## 2. Ա Գ Ր Ո—Ձ Ո Ո Դ Ա Ս—Տ Ժ Ա Ս

Տարրական հասկացողութիւնն բույսերի կյանքի մասին: Տեղական տեխնիքական բույսեր—բանջարանոցային, մրգատու և այլն: Նրանց մշակման, աճեցման և բաղմացման ձևերը: Տեղական բույսերի կուլտուրայումն: Կարողանալ վորոշել սերմերի ծրիւղ ունակութիւնները, ճիշտ գործադրել աղբային և հանքային պարարտանութիւնը, պայքարել գյուղական տնտեսութեան անբախտութիւն և վնասարարների դեմ: Իմանալ պատվաստի ձևերը:

Կարողանալ պատրաստել մարգեր, պաշտպանել «գերանը» ցրտից, տնկել սածիլը: Վնասարարների դեմ պայքարել միջոցներ գործադրել:

1. Ծխախոտն ու նրա կուլտուրան նայած հողի շերտերին, նրանց պարարտացումը և խնամատարութիւնը: Ծխախոտի հիւ վանդութիւնները և պայքարը նրանց դեմ:

2. Թեյ և նրա կուլտուրան:

3. Յուղաբույսեր (ЭФИРОНОСЫ):

Ընտանի կենդանիների և թռչունների խնամատարութիւնը: Ինչպես պատրաստել սիլոսը:

Շերամի վորդի խնամատարութիւնը ինչպես մեծցնել, չորացնել և տեսակների բաժանել բոժոժիկները:

Ինչպիսի գյուղատնտեսական մեքենաներ են գործադրվում Աբխազիայում. նրանց հետ վարվելու ձևն իմանալը, իրարից բաժանելն ու յետ հավաքելը, յուղելն և դեկավորելը (եքսկուրսիա դեպի սովխոզ, կոխոզ, ՄՏԿ):

## 3. Ս Ա Ն Ի Տ Ա Ր Ա Կ Ա Ն Դ Ա Ս

Առողջապահական ունակութիւններ: Անձնական առողջապահութիւն: Բնակարանի սանիտարական առողջապահութիւն (հատակը մաքրել, լվանալ, ողափսիութիւն կատարել, դեզինֆեկցիայի յենթարկել և այլն): Սանիտարական առողջապահութիւն բակերի, փողոցների: Հասարակական շինքերի սանիտարական միջոցառումներ: Պայքար ճանձերի և ջերմի մոծակների դեմ:

Պայքար վարակիչ հիվանդութիւնների դեմ: Հիվանդութեան դեպքում բժիշկի դիմելը: Առաջին ոգնութիւնը դժբախտութեան դեպքում:

V

### ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընթերցանութեան ունակութիւնները

Համառոտ նախադասութիւնների դանդաղ ընթերցումն յուրաքանչյուր բառի պարզ արտատանութեամբ և ճիշտ շնչադրութեամբ:

Ձայնի ցածրացումն ու կանգնեցնումը նախադասութեան

վերջը և վերջակետի մոտ: Հարցական և բացականչական նշանները նախադասութեան մեջ: Կարգացած կտորի կամ հոգվածի բովանդակութիւնը հասկանալ:

## 2. ԲԱՆԱՎՈՐ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Հարցերի պատասխանները թեմայի և դասի բովանդակութեան մշակման հետ կապված, կամ կարգացած հատվածների կամ հոգվածների բովանդակութեան հետ կապված: Համառոտ պատմվածքներ շրջապատի կայնքից, կենցաղից, արբադրութիւնից:

## 3. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հասկացողութիւն վերջակետի մասին: Գլխատուները գրավորի սկզբում և վերջակետից հետո: Գլխատուները հատուկ անուններում:

Ձայնավորներ և բաղաձայններ: Տողադարձի կանոն: Յերկբարբառներ՝ յե, յո, յա, յու, այ, ոյ, ույ, էյ, կիսաձայն՝ յ:

## 4. ԳՐԱՎՈՐ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Անսխալ արտագրութիւն ձեռագիր և տպագիր նյութերի: Ձրույցի բովանդակութեան համառոտ յեղրակացութիւնների գրանցումն կոլլեկտիվ կերպով:

Կոլլեկտիվ կերպով գործնական գրութիւններ կազմել.— հասցե, անկետա, դիմումներ:

Կոլլեկտիվ կերպով համառոտ թղթակցութիւններ կազմել լրագրի համար:

## 5. ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարգալ և գրել յերկանիշ և յեռանիշ թվեր 1000—ի շրջանում:

Փոխադարձ հարաբերութիւնը թվակարգերի մեջ: Ծանոթութիւն հռոմեական թվանշանների հետ XX—ի շրջանում:

Գումարումն, հանումն, բաղմապատկումն և բաժանումն 1000—ի շրջանում:

Գումարումն և հանումն 1000—ի շրջանում:

Կարգալ և գրել մասերը—<sup>1</sup>/<sub>2</sub>, <sup>1</sup>/<sub>4</sub>: Կարգալ դիագրամներ: Ընդհանուր ծանոթութիւն տոկոսների մասին (կարգալ տոկոսները):

Ավելի գործածական մետրական չափերի մասին հասկացողութիւն (մետր, կիլոմետր, գրամ, կիլոգրամ, ցենտներ, տոնն, լիտր, հեկտար):

Կատարել գումարումն և հանումն համրիչի ողնութեամբ:

Կարգալ և գրել բաղմանիշ թվեր (պարտադիր չե, այլ կախված է խմբակի կազմից):

### 6. ՄՏԱԽՈՒՋԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կողմնորոշումն (ориентировка) տարածության մեջ—զբա-  
նել Արխագիայի քարտեզի վրա առանձին բնակություն կետերը,  
նորակառույցները:

2. Կողմնորոշումն հասարակական և պետական հիմնարկնե-  
րում—անհրաժեշտ տեղեկանքներ հավաքել այդ հիմնարկներից,  
մանավանդ գյուղատնտեսական հարցերի մասին: Բացատրությու-  
ն հիմնարկների համառոտ անունների (ժՏԲՍ—ժողովրդական Տըն-  
տեսություն Բարձրագույն Նորհուրդ և այլն):

3. Կողմնորոշումն հասարակական արտադրողական աշխա-  
տանքի մեջ (աշխատանքի կազմակերպումն, տեխնիկան և այլն):

Ուսումնական պիտույքներ ուսուցչի և աշակերտ-  
ների համար

Քաղաքի դպրոցների համար

) «Բանվոր»—այբբենարան.

Գյուղի դպրոցների համար

1) «Դեպի կոմունա»—այբբենարան.

Ուսուցչի համար

1) Մեթոդական ձեռնարկ—հրատ. Արխագիայի Ա. Ս. Ն. Հ.  
Կուսմոդկովի 1932 թ.



53,639

531